

Առաջաւուար ըսելը կ'երևնայ թէ իրենց  
հին Առվենէստ անուննէն ելած է, որ աս  
ալ Աշունէղ անունն է, և մեր Աշունն  
ըսածին աւելի կը մօտենայ :

Ինդհանրապէս Առնաւուտները իրա-  
րու կը նմանին թէ բարքով և թէ կեր-  
պարանքով . ամէնքն ալ քաջ, աւազա-  
կաբարոյ, չարքաշ ու տգէտ են :

Առնաւուտները ասկէ չորս հարիւր  
տարիի չափ առաջ ամէնքն ալ քրիստո-  
նեայ էին, ետքը մեծ մասը տաճկրցան .  
Հիմա քրիստոնեաները կէս մը յունա-  
դաւան են՝ կէս մը հռոմէական, բայց  
թէ քրիստոնեաները և թէ մահմէտա-  
կանները խիստ աւելորդապաշտ են, և  
իրարու սաստիկ թշնամի . մէկ կողմա-  
նէ ալ իրենց անհանդարտ բնաւորու-  
թեամբը ստէպ ստէպ ( ) սմաննեան տէ-  
րութենէն զլուխ կը քաշեն ու նորէն  
կը նուածուին :

( ) սմաննցւոց սուլդան Առուրատ թա-  
գաւորը 1448ին տիրեց Առնաւուտնե-  
րուն, ու տաճկրցուց զիրենք : Ան ա-  
տենները Առնաւուտներուն իշխանն էր  
Քովհաննէս Քասթրիոթ, որ Քույա  
կամ Աքհիսար ըսուած քաղաքը կը նրս-  
տէր . ասոր որդին Գէորգ տաճկրցաւ,  
և ըսուեցաւ Խաքէնտէր պէկ . ու զօրա-

ւոր մարդ ըլլալով՝ սուլդան Առուրատին  
ծառայութեանը մէջ շատ քաջութիւն-  
ներ ըրաւ . Աս Խաքէնտէր պէկը իր մեծ  
եղբօրը յաջորդելէն ետքը՝ նորէն քրիս-  
տոնեայ եղաւ ու ապստամբեցաւ ( ) .  
մանեան տէրութենէն . շատ ու մեծա-  
մեծ յաղթութիւններ ըրաւ, շատ տե-  
ղերու տիրեց, ինչուան Ա Ենետկեցւոց.  
մէ ալ տարին 1500 ոսկի տուլք աւաւ .  
իր երկրին մէջ շատ կարգեր կանոններ  
դրաւ, ու Պիոս Բ պապին հետ տես-  
նուելու համար Հռոմերթալէն ետքը  
դարձաւ իր երկիրն ու մեռաւ 1467ին .  
Խաքէնտէր պէկին որդիքը վախնալով  
Փաթիհ սուլդան ԱՌէհէմմէտին զօ-  
րութենէն՝ իրենց մեծերովը փախան  
Կափոլի, հասարակ ժողովրդեան մէկ  
մասը Ա Ենետկեցւոց զաւառները ան-  
ցան, և սուլդան ԱՌէհէմմէտ բողորովին  
տիրեց Ալավանիային : Անկէց ետքը ին-  
չուան Տէփէտէլէնի Ալի փաշային օ-  
րերը Առնաւուտները ազգային իշխան  
մը չունեցան . բայց Ալի փաշան ալ Խա-  
քէնտէր պէկին ոչ քաջութիւնները, ինչպէս  
որ ուրիշ տեղ իր վարքը պատմեցինք՝  
և հա ալիր պատկերը դրինք :

---

### ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱԽ

Բ .

### Ի ԱՐԵԲ Լ ՀԱՅՈՒԹԻՒՆ :

ԱՐԴԻՔ գերութեան իմ ժողովուրդք ծընեալ յերկիր օտար,  
Ար ժողովեալ էք աստ,  
ԱՌի մոռանայք մի մոռանայք ըզհայրենին աշխարհ  
Ծզհայաստան քարիննմն :  
Երկայք արտասուօք մեք ընթացուք մըտօք այսօր 'ի նոյն  
Օտօնս 'ի տեղին տօնել :  
Անփորձը գըթամ 'ի հող հետոց Լուսաւորչին իմոյ  
Լամ և ինդրեմ ըզնոյնն :  
Կայեցեալ տեսէք ըզսուրբըն Գրիգոր նոր հայրապետ եկեալ  
Կորահաւատ հօտին .

Ե մեծըն յիշիրատ առեալ ածէր զայն բազմութեան ամբոխն  
Ովկըրտութեամբ օրհնեալ :

Կայր մեծ քահանայն բեհեզազգեաց աւազանին ընթեր  
Ար ՚ի դրախտէն բղխէր .

Ը ուրջ պարեն հրեշտակք բուրմամբ ինկոց և լապտերաց ջահիւք  
Օ երեքսրբեանն երգեն :

Ո ատեաւ ՚ի խորհուրդըն Վրիստոսի մահուն յօժար և փոյթ  
Ո նեծըն Տրդատ արքայն .

Ռիւրք հնգետասան անդր ՚ի խոնարհ իջեալ նըմա ըզկընի  
Հայաստանեայց ժողովն :

Դ ուրըն զետեղեալ շրջան առնոյր անդրէն պաշտել զբանակն  
Աւ զուարձանայր ՚ի նոյն :

Յիսուս զուարձացեալ ՚ի նորածին յեղբարսն յողըոյն իջեալ  
Ռանայր զերկինս հանդէպ .

Ո իւն լուսոյ ձըգէր վերոյ նոցա չըքնաղաձե խորան՝  
Ո քեզ Վրիգորիս և դեռաբոյս մանկանց եղբարցդ իմոց

Ո այելքութեան տաճար :  
Ո պա քահանայն մեծ ծաւալէր զորդեզրութեան մեռնն  
Ո ստուածազարդ ձեռօքն .

Ո վ ըսքանչելեացս , շուրջ բազմութեանըն նա իւրովի խաղայր  
Աւ քրիստոնեայս կնքէր .

Ո փրուցըն բազմաց մի կաթ իւղոյն ոչ պակասեաց այսօր ,  
Ո յլ բաւականացաւ :

Հ րեշտակք հնչէին , Կոր մըկըրտեալք դուք ըզգեցայք ըզ Վրիստոս ,  
Ա չք Ո ստուծոյ որդիք .

Ա կայք հաշեցէք այսուհետեւ ըզտերունեան մարմինն  
Գ ըլիոյն անդամբ եղեալք :

Բ աշխէր հայրապետն ըզսարսափելին ամենեցուն զպարգեն  
Ո ուսազարդեալ մանկանցն :

Ո յսպէս կոչեցար , ով Հայաստան , ՚ի Վրիգորէ սրբոյ ,  
Ա միացար յ Ո ստուած :

Ա րնեա և ծանիր , ում այլ ազգաց այսպէս եղեւ շընորհ  
Ո րպէս և քեզ տեսեր .

Ո ւր քո յիշատակ կամ գոհութիւն այս մեծամեծ ձըրիցս  
Ո վ ժողովուրդըդ իիստ .

Ո խող զունայնութիւնդ օտարացեալ ամբարշտեալ գայլոցն  
Ա ւ նորոգեալ դարձեալ ,

Զ այնիւ նըզովեա զհերետիկոսքն յուխտէ առաքելոցն  
Ա ւ սուրբ քահանայիցն :

Բ աց է զրունք երկնից ով տառապեալ իմ կշտամբեալ ժողով , փութա  
Ո Վրիգորին քո գոդ .

Հ աւատա նըմին և նորայոց սրբոց հայրապետացն  
Ա ւ զդաշցիր ընդ նոյն .

Փ առս վերահնչել Երրորդութեանն ՚ի յանպատում ՚ի կեանան  
Ո իշտ յաւիտեանս . ամէն :

Ո՛Յ ՀաՅԱՍՏԱՆ ՔԱՐԴԻՆ. ո՛Հ .  
որ այնչափ փառաւոր ու տիսուր յիշա-  
տակաց հետ՝ աս սրտաստոջոր ու ազգա-  
սեր երգողին նշխարքն ալ կ'ամփոփէք  
ձեր ցրտիկ ծոցը , արդեօք յետ վեցհա-  
րիւր կամաւելի տարիներու լսելով հոս-  
կից անոր լւած քնարին ձայները՝ պիտի  
արձրկէք այն կենդամնատիպ մոխիրնե-  
րէն դուրս կայծ մը՝ որ ձեր ազգին մե-  
ռելատիպ կենդանութիւնը վառէ բոր-  
բոքէ անմահացընէ : Ո՛Վ մոռացեալ ու  
անարգեալ հայաստան ժարին , արդեօք  
ձեր վառվըռուն աստղերուն տակ կը  
չնչեն անանկ կուրծքէր , որ գան ու  
արթնցընէն ձեր խուլ ու խորին արձա-  
գանգները՝ կանչելով իրենց նմաննե-  
րուն , “ Որդիք գերութեան , մի մոռա-  
նայք մի մոռանայք զհայրենին աշխարհ ,  
զհայաստան քարինսն , : Կամ գոնէ  
պիտի զգա՞ն կարգացող ու լսող սրտերն  
այս երգոյս կերպ ու կերպ փափուկ ձայ-  
ները , այն հայաստան քարերը , այն  
Ո՛ԵՇ Տրդատ արքայն , այն Հնգետա-  
սան բիւր Հայաստանէայց ժողովը , որ  
մէկ շարժմամբ մկրտուելու կը նետուին  
շրջանապտոյտ Խփրատէսին ծոցը , այն  
Օուարձացեալ Հիսուսը ’ի նորածին  
եղբարսն , այն իմ Գրիգորիար և դե-  
ռաբոյս եղբարքը , այն Այսպէս կոչե-  
ցար ով Հայաստանը . և այն սրտագին  
մաղթանքները՝ որոնցմով կը լոէ երգը ,  
և մեզի անլուելի սրտով դէպ ’ի երկինք  
գոչել կուտայ : Հասա՞ն արդեօք ով  
Հայաստան այն տարիները , որ այդ քա-  
րերէդ քու փլած տաճարիդ կանգնիլը  
պիտի տեսնենք . չէ նէ մենք ալ զքեզ  
կանչելով կանչելով՝ վերջապէս վրանիս  
ուրիշ բան պիտի չգտնենք բայց եթէ  
քենէ թաւալեցուցած անտաշ քարինք ,  
ու տրտմագին շնչով երթալով պիտի  
կանչենք , “ Ուր քո յիշատակ կամ գո-  
հութիւն , ով ժողովուրդը խիստ , :

## ՅԱՌԱՏԱԿԱՐԵԱՆ ՀԱՅՈՑ

Ա.

ՁԵՌԱԿԱՐԵԱՆ ՈՒՅՈՒՆ :

Ըստ հեղ Հայաստանի աւերակաց  
և ազգային յիշատակարանաց վրայ փա-  
փաքներ և խօսքեր ըրեր ենք , որ աւե-  
լի շարժին ազգասէր հոգիք և այն յի-  
շատակարանները քննեն , ձանչնան և  
ձանցընեն . յիրաւի զանազան ձամբոր-  
դութիւններու հատուածներ , և զա-  
նազան ձեռագրաց վրայ տեղեկութիւն-  
ներ արուեցան քանի մը օրագիրներէ ,  
բայց զեռ չերեցան այն Հայոց Հիշա-  
տակարանները , այսինքն Հայոց Հնու-  
թեանց պատկերները և տեղեկութիւն-  
ները՝ որոնց համար ազգասիրութեամբ  
վառուած մերազգի հնագետ մը 1846  
տարւոյն Բազմավիպին վերջի թերթին  
մէջ աշխոյժ հատուած մը զբեց , և  
կերպ մը ցըցուց աս հնութիւնները  
դուրս հանելու : Ալ սպասէինք որ հա-  
ճութեան ձայն մը լրասւի և գործա-  
դրութեան պտուղը երենայ . թերես  
շատերը գոված ալ ըլլան խորհուրդը և  
խօսքերը , բայց մէկ տեղաց նշան մը  
չերեցաւ՝ կամ առանձին կամ աս օրա-  
գրիս միջոցով հրատարակել տալու մէկ  
Հայկական յիշատակ մը , որ ոչ միայն  
խօսքով այլ և պատկերքով տեսներ մեր  
ազգը , և սիրու արծարծէր իր նախ-  
նեաց փառացը վրայ , ուսկից շատ օգուտ  
կրնար քաղել : Ուրեմն մեզի կ'իյնայ  
եղեր աս բանիս առջի օրինակը տալ , և  
ազգերնուս աս զուարձութիւնն ալ  
պատճառել , յուտալով որ զանազան ան-  
ձինք ալ , որոնց քով կը գտնուին հայկա-  
կան յիշատակներ , եթէ դրամ եթէ  
կնիք , եթէ հին ձեռնազիրք կամ կոն-  
դակ և եթէ այլ հնութիւն , մեր հրա-  
տարակած քանի մը պատկերները տես-  
նելով՝ յորդորուին իրենց ունեցածն ալ  
հրատարակել , ու թէ մեզի , թէ ազ-  
գին և թէ իրենց մէկ մեծ հաճոյք մը  
և պատիւ մը ընեն :

Հրատարակելեաց մէկ տեսակն ալ